№ 25 Փետրվարի 12 Հաբաթ 1883 Փետրվարի 12 Հաբաթ № 25

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՄՇԱԿ"

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆԵՐԿԱՅ **1883** ԹՎԻՆ ՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ

ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ

Ի. ՏԷՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԳՈՒԱԾՆԵՐ։ III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ VI. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ֆելիետօն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ գիտութեան ամեն ճիւղերից, թղթակցութիւններ։ VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ։ Տարեկան 10 ռուբլ, վեց ամսվայ 6 ռուբլ, իւրաքանչիւր ամսվայ 1 ռուբլ։
ՀԱՏՈՎ համարները 5 կոպէկ։
ՀԱՍՑԷՆ։ *Тифлисъ, редакція «Мшакъ».*

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հարկաւոր է հոգալ։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Գօրուց։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Մամուլի անբարոյականութիւնը։

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՀՈԳԱԼ

Վերջին ժամանակներում „Մշակի" մէջ տպված մի շարք նամակներից և լուրերից ընթերցողը ծանօթացաւ ղրքան տխուր դրութեան մէջ է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը։

Այդ դպրոցի շինութիւնը վերին աստիճանի անյարմար է դպրոց լինելու. ամառը շոգ, ձմեռը ցուրտ, միշտ թոց, ննջարանը և սեղանատունը միշտ խոնաւ, վատ շինած արտաքնոցներից ապականված օդ։ Դպրոցի ներքին կարգ ու սարքը, ինչպէս երևում է, այն աստիճան անպիտան է, որ աշակերտների, մանաւանդ որդեդիրների մէջ անպակաս են պարբերապէս այլ և այլ հիւանդութիւններ, մանաւանդ թոքախտը տիրում է սարսափելի կերպով այդ միակ հայոց կարգաւորեալ դպրանոցի մէջ։ Որդեդիրների կերածը, ինչպէս երևում է, վերին աստիճանի անառողջ բաներ են, նրանց նընջարանը այն աստիճան հակաառողջական պայմանների մէջ է դրված, որ դառնում է ինքն իրան տարածող ամեն տեսակ հիւանդութիւնների։

Մարդս շուարված է մնում, երբ մտածում է թէ այդ դպրոցը ունի տեսուչ, որի դէպքին է „ազգին և եկեղեցուն ծառայել", ունի նոյն ուղղութեանը պատկանող տասն և երկու հատ հոգաբարձուներ, որոնք, ուրեմն, այդ ֆիզիկապէս ապականված շրջանից, այդ Ներսիսեան դպրոցից, պէտք է դուրս բերեն ազգին և եկեղեցուն պիտանի զաւակներ. մարդս, ասում ենք, շուարված է մնում, երբ մտածում է թէ Ներսիսեան դպրոցը տարեկան 60 հազար ռուբլ եկամուտ ունի, միայն 10 հազարով պակաս քան թէ Թիֆլիսի առաջին արական գիմնազիան,—բայց ինչ զանազանութիւն երկու դպրոցների դրութեան, կարգ ու սարքի մէջ, նրանց անտեսական, առողջապահական պայմանների մէջ։

Մենք, անդրկովկասեան հայերս, մեր ողորմած կառավարութեան շնորհով ազնիվ պայմանների մէջ ենք միշտ դրված եղել հիմնելու և կառավարելու մեր հոգևոր դպրոցները։

Մենք պէտք է գնահատենք այն բացառական դրութիւնը, որ մենք, մեր դպրոցներով, բռնում ենք Կովկասեան միւս ազգերի շարքում և պէտք է ամեն ջանք գործ դնենք որ մեր այդ դպրոցները ճշմարիտ լաւ կառավարենք, որպէս զի նրանք օրինակելի դառնան Կովկասեան միւս ազգերի համար։

Մի ազգ, որ ունի իր սեփական, մայրենի լեզուով դպրոցներ, այդ տեսակ ազգ օրուտ է տալիս թէ իրան և թէ ամբողջ պետութեանը։ Մայրենի լեզուով սովորելով, մարդս աւելի ընդունակ է դառնում, աւելի կանոնաւոր կերպով մտաւորապէս զարգանում է, որովհետև ստանում է իր ուսումը իր ֆիզիօլոգիական, բնական յատկութիւններին յարմար լեզուով։ Ուրեմն մարդս անհատապէս աւելի բնական, աւելի ինքնուրոյն, աւելի լիակատար կերպով զարգանում է։ Իսկ այդ տեսակ անհատը, աւելի կատարեալ լինելով, աւելի էլ օգտաւէտ է լինում թէ իր ազգի համար և թէ ամբողջ պետութեան համար։

Երևի մեր կառավարութիւնն էլ այդ ճշմարտութիւնը հասկացել է, որովհետև թոյլ է տալիս իր մեծ պետութեան բոլոր հպատակ ազգերին սովորել իրանց դպրոցներում իրանց մայրենի լեզուով։ Ֆինլանդացին՝ ֆինլանդերէն է սովորում իր դպրոցում, գերմանացիները ոչ թէ միայն Բալտեան նահանգներում, բայց և Մոսկվայում և Ս. Պետերբուրգում իրանց հիմնած դպրոցներում բոլոր առարկաները գերմաներէն լեզուով են աւանդում, հայը հայերէն լեզուով է սովորում իր դպրոցներում, և ոչ թէ միայն հայ լուսաւորչականը, բայց և հայ-կաթոլիկը և հայ-բողոքականը ունեն իրանց դպրոցները մայրենի լեզուով, վերջապէս թուրքն էլ Ռուսաստանում, իր մզկիթների մօտ հիմնած դպրոցներում, թուրքերէն լեզուով է սովորում։

Մենք վերջացնում ենք մեր խօսքը կրկնելով, որ ունենալով մայրենի լեզուով դպրոց-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՄՈՒԼԻ ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

«Ստախօսները յիշողութիւն չունեն»—ասում է մի յայտնի առած։ Իսկ ես դրա վրա կաւելացնեմ, որ ստախօսը իր երէկվայ ասածը այսօր մոռանում է և անդադար ինքն իրան հակառակում է։

Այսպէս է վարվում «Մեղու» լրագիրը, այսպէս է վարվում նրա խմբագիր պ. Սիմօնեանցը։

Երբ «Մեղուն» դէմ մի լուրջ, սառն և գրական պատշաճի բոլոր արժանաւորութիւնները պահպանած յօդուած է տպվում,—երբ այդ լրագրի պ. խմբագիրը իրան նեղ տեղը ընկած է զգում, իսկոյն խոյս է տալիս, և փոխանակ նոյնպէս լուրջ կերպով պատասխանելու, թաղչում է իր թերթի գծի տակ, և սկսում է այնտեղից ֆէլիետոնական մասխարութիւններով պատասխանել։

«Արձագանքի» մէջ տպվում է մի յօդուած, որի մէջ ցոյց է տրվում քսան և հինգամեայ «Մեղուի» քսան և հինգ ամեայ ոչնչութիւնը։ Բայց այդ լրագրի ազնիւ խմբագիրը, փոխանակ իր թերթը պաշտպանելու, դարձեալ ֆէլիետոնական խեղկատակութեամբ ակնարկութիւններ է անում մի պարոնի վրա, թէ X-ը Z-ի փողերի հետ այսպէս կամ այնպէս վարվեցաւ։ Դա ինչ է ապացուցանում։ Դրանով ոչ «Մեղուն» լաւ լրագիր կը համարվի և ոչ նրա խմբագիրը փողի հաշիւներում իրան մաքուր պահող մարդ։

«Մշակի» մէջ տպվում է Ախալքալաքի նամակը, որը ներկայացնում է քսան և հինգամեայ «Մեղու»-ի կատարած տխուր գերը, որը մերկացնում է նրա այլանդակութիւնը, և ցոյց է տալիս այդ լրագրի պ. խմբագրի ուղղութիւնը։—Դարձեալ, փոխանակ փաստերի դէմ փաստերով պատասխանելու, հանդէս է գալիս ֆէլիետոնական մասխարութիւնը։

Այդպէս է պատասխանում «Մեղուի» ֆէլիետոնիստը (նոյն ինքն պ. Սիմօնեանցը) իմ պ. Սպանդարեանի յօդուածի առիթով գրած նամակին։

Այս տեսակ միմոսութիւններին առհասարակ չեն պատասխանում, որպէս չեն պատասխանում մի փչացած երեխայի ստահակութեանը, որին երբ խրատում են, յանդիմանում են, կամ որ և իցէ նկատողութիւն են անում նրա անկարգութիւնների մասին,—իսկ նա փոխանակ կարմրելու, փոխանակ զղջալու, սկսում է աւելի անամօթաբար բերանը ծռմռել ու զանազան յիմարութիւններ ասել։ Մանկավարժների ոմանց կարծիքով, այս տեսակներին ուղղելու համար աւելի օգնում է ոչ թէ խօսքը կամ խրատը, այլ ծեծը, ապտակը...

Բայց ինչ պէտք է անես, մենք մի այնպիսի հասարակութեան մէջ ենք ապրում, ուր դժբախտաբար խիստ սակաւ է այն մարդկանց թիւը, որոնք հասկանում են, թէ ինչ բան է մամուլի ազդեցութիւնը։ Իսկ մեծ մասը ամեն մի կենսական հայհոյանքից ոչ միայն չէ զզվում, այլ մինչև անգամ գովում է, զուարճանում է կարդալով, և ասում է «տես անպիտանը, ինչ լաւ քոթկել է»...

Այս տեսակների ծաղրածութեան առարկայ չը դառնալու համար ստիպված ես պատասխանել։

Պ. Սիմօնեանցը ասում է, որ ես չեմ հասկացել պ. Սպանդարեանի յօդուածի միտքը (կարծեմ պ. Սպանդարեանը ինքը կարող էր պատասխանել, արդեօք ես հասկացել եմ թէ ոչ) թէ նա, այսինքն պ. Սպանդարեանը կամեցել է ասել, որ «Բաֆֆին իր վէպերով երբեմն երեսացող և երբեմն դադարող կէսերից մէկն է. իսկ «Մեղուն» քսան և հինգ տարի շարունակ կանոնաւորապէս գործող լրագիր է. ազգային կեանքում շարունակ մշակող գործիչ է»։

Պ. Սիմօնեանցը կարծում է, որ վէպը փոնչու հաց է, և կարելի է ամեն օր, քանի հատ կամենաս՝ թխես, ինչպէս քսան և հինգ տարի շարունակ թխել է նա «Մեղուի» դարտակ համարները։

Եղել են հեղինակներ, որոնք իրանց ամբողջ կեանքում, քսան-եռեսուն տարի աշխատել են և միայն մի վէպ են գրել, իսկ իրանք մնացել են անմահ և նրանց գիրքը մինչև դարերի վերջը կը կարդացվի։ Իսկ եթէ այսօր դադարեց «Մեղուն», հինգ օրից յետոյ ոչ ոք չի յիշի, թէ արդեօք եղել է այս աշխարհում մի որ և իցէ Սիմօնեանց, թէ ոչ։ Նրա անունը կը մոռնի իր թերթի հետ։

Բայց պ. Սիմօնեանցը իմ աշխատութիւնները վէպ չէ կոչում, այլ «հէքիաթներ» է համարում այն ևս ծաղրական մտքով։ «Դեռ ևս քննելի են այդ հէքիաթները, ասում է նա, թէ վիպասանութեան որ ճիւղին են պատկանում և իրօք արժանի են այդ անունը կրելու։»

Իրաւ է, իմ վէպերի մասին, որքան յիշում եմ, մեր պարբերական հրատարակութիւնների մէջ հիմնաւոր կրիտիկա չէ եղել. տպվել են միայն մասնաւոր նկատողութիւններ։ Բայց գրվել է մի ընդարձակ կրիտիկա, այն ևս «Մեղուի» մէջ տպված, կարծեմ 81 թուականում։ Այդ յօդուածի մէջ կրիտիկոսը, համեմատելով ինձ մեր միւս գրողների հետ, առաջին տեղն է տալիս իմ վէպերին, և յայտնում է այն միտքը, որ եթէ պէտք լինէր մեր գրականութիւնից մի բան թարգմանել և ցոյց տալ օտարազգիներին,—դա պէտք է լինի Բաֆֆիի վէպերից և այլն։

Այդ տողերը մէջ բերելով, ես նպատակ չունեմ որ և իցէ նշանակութիւն տալ «Մեղուի» գովասանքներին։ Նրա գովասանքները իմ վերաբերութեամբ նոյն նշանակութիւնն ունեն, որպէս նրա հայհոյանքները։ Այլ յիշեցրի այն նպատակով, որ հաստատեմ իմ յօդուածի սկզբում գրած առածը, թէ «ստախօսները յիշողութիւն չունեն». այսօր այս կասեն, միւս օրը ուրիշ տեսակ կը խօսեն։ Մի քանի տարի առաջ «Մեղուի» կարծիքով իմ վէպերը պատիւ կը բերէին հայոց գրականութեանը, եթէ օտար լեզուներով թարգմանվէին, իսկ այժմ նոյն «Մեղուի» ասելով նրանք «հէքիաթներ» են։

Ինչու ենք հեռու գնում։ «Մեղուի» մի և նոյն համարում (№ 11), ուր գծի տակ պ. Սիմօնեանցը իմ վէպերը կոչում է «հէքիաթներ»—գծի վերի յարկում տպում է հետևեալ տողերը.

«Գլխաւորապէս «Մշակին» ամենազօրաւոր զարկ տուողը և տարածողը եղաւ մեր ամենից յարգելի Բաֆֆին, որը իր գեղեցիկ և գողտրիկ գրչով գրաւեց ընթերցողների ուշադրութիւնը իւր մի շարք վէպերով։ (Յետոյ յիշելով վէպերի անունները, շարունակում է.) Թող ներուի մեզ ասել, որ մեծ. Բաֆֆին «Մշակը» բռնի կերպով տարածեց իր գեղեցիկ վէպերը դետեղելով այդ լրագրի մէջ»։

Հիմա որին պէտք է հաւատալ, գծի վերևի գովասանքներին, թէ գծի տակի հայհոյանքներին։ Երկուսն էլ մի և նոյն համարի մէջ տպված։

Դա նմանում է այն բանին, երբ մէկը վերևից լեզուով չողոքորդութիւններ է անում, իսկ ներքևից ոտքով ծածուկ քացի է տալիս։

Այսպիսի վարմունքի ընդունակ է միայն «Մեղուի» պ. խմբագիրը, որը գոնէ այնքան պատկառանք չունի, որ համարձակվում է դարձեալ մի և նոյն համարի առաջնորդող յօդուածի մէջ խօսել մամուլի աղնութեան վրա։ Մթթէ մամուլի աղնութիւն է այդ, նոյն համարի մէջ մէկին համ մինչև երկինքը բարձրացնել, համ աշխատել մրոտելու նրան։

Հիմա դառնանք դէպի «խաչագողների» հարցը։ Ինչպէս երևում է, այդ բառը պ. Սիմօնեանցին շատ դիւր է եկել, և անդադար գործ է ածում, դարձեալ մի և նոյն համարում։

Ես հաւատացած եմ, եթէ անմահ Շիլլերը հայ

ներ, որոնք անհրաժեշտ են թէ մեզ համար, թէ խելացի, ինքնուրոյն, անհատապէս զարգացած՝ պետութեան քաղաքացիներ պատրաստելու համար, մենք հայերս պէտք է ամեն ջանք գործ դնենք լաւ դրութեան մէջ պահելու այդ մեր դպրոցները թէ ուսման, թէ տնտեսական, թէ առողջական տեսակէտից, որպէս զի նրանք օրինակելի լինեն մեզ շրջապատող կովկասեան միւս, փոքր ազգութիւնների համար:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳՕՐՈՒՑ

—

Փետրվարի 10-ին

Գառնակերտեանց վարդապետից յետոյ Գօրին ամբողջ երկու տարի առանց յաջողի մնաց: Վերջապէս անցեալ տարի սոյն ամսին հոգևոր իշխանութիւնը բարեհաճեց նշանակել այստեղ մի երիտասարդ վարդապետ Գարեգին Սաթունեանց ազգանունով, որի առաջին հայացքը մեծ յոյսեր էր խոստանում մեզ: Բայց արդեօք մեր այդ յոյսերը իրագործվեցան,—ոչ: Ուղիղ մի տարուց յետոյ հոգևոր իշխանութիւնը դրան խլեց մեզանից և թողեց մեզ անմխիթար դրութեան մէջ:

Սա իր գալու օրից իր գլխաւոր ուշադրութիւնը դարձնում էր իր վիճակում եղած հայոց հոգևոր ուսումնարանների վրա, որոնց վրա յետոյ կարգվեցաւ օգնական թեմական վերատեսչի: Տեղիս հայոց երկսեռ ուսումնարանների վերաբերութեամբ մի քանի անգամ ժողովներ կազմեց հասարակութիւնից, բայց չը նայելով իր աշխատանքին այս կարճ ժամանակամիջոցում չը կարողացաւ իր ցանկալի դիտաւորութեանը հասնել: Հազիւ թէ մի տարվայ մէջ կարողացաւ ծանօթանալ տեղացիների հետ, որոնց օգնութեամբ պէտք է իր գործը սկսէր:

Նախկին յաջողի ժամանակ Գօրին բաժանված էր երկու միմեանց հակառակ կուսակցութեան, բայց սրա ժամանակ միացան, որովհետև սա սէր էր քարոզում: Ոչ մի յաջողդ այնպէս չէ սիրվել տեղացիներից, որպէս Գարեգին վարդապետը, որը նոյնպէս սիրեց սրանց և միշտ գոհ էր սրանցից:

Բայց արդեօք ինչ էր սրա շուտ հեռանալու պատճառը: Լսում ենք որ Սաթունեանց վարդապետը խնդրել էր հոգևոր իշխանութիւնից, որ կամ ռոճիկ աւելացնեն և կամ ուրիշ տեղ կարգեն բաւարար ռոճիկով, որովհետև այստեղ քիչ ռոճիկ էր ստանում, այն է տարեկան 500 ռուբլ: Բայց ինչու միայն սա էր գանգատվում ռոճկի համար և միւս յաջողները չէին գանգատվում: Այս բանը մենք կը բացատրենք այսպէս որ, ինչպէս մենք հաստատապէս տեղեակ ենք, Գարեգին վարդապետը անշահասէր էր և սաստիկ ատում էր կաշառք ասած բանը և ինչպէս որ լինում էր կառավարվում էր իր համեստ ռոճիկով, ասելով թէ՝ աւելի լաւ է ես աղքատ ապրեմ, քան թէ դիմեմ այդպիսի անկանոն միջոցներին:

Յունվարի 29-ին Սաթունեանց վարդապետը հրաժարական քարոզ ասեց տեղիս մայր եկեղեցում և վերջին ողջոյն տալով հայ հասարակութեանը, դուրս եկաւ եկեղեցուց, իսկ հասարակութիւնը վերջին անգամ նրա աչը համբուրելով՝ ցաւակցութիւն յայտնեց նրա փնալու մասին: Վերջապէս ամենքից սիրված Գարեգին վարդ. Սաթունեանց ամսիս 5-ին ուղևորվեց դէպի Նովի նոյն պաշտօնով: Շնորհաւորում եմ Նուխեցիներին, որոնք աւելի բաղդաւոր են եղել մեզանից: Ի սրտէ յաջողութիւն ենք ցանկանում Գարեգին վարդապետին իր ամեն գործերի մէջ: Սրան յաջորդեց Գէորգ վարդապետ Մարտիրոսեանց:

Տեղացի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Շնորհակալութեամբ ստացանք Կ. Պոլսից «Հայոց Միացեալ ընկերութեանց» հրատարակած Թ. Թերզեանի «Քերականութիւնը աշխարհաբար լեզուի»: Գիրքը 186 երեսից է բաղկացած և տպված է Կ. Պոլսում, տպագր. Զարդարեան, 1882 թվին:

—

Շամախու դաւառի Քարքանջ գիւղից ստացանք հետևեալ պաշտօնական հերքում, որի տակ խիստ է գիւղական հասարակութեան կնիքը և որ ստորագրել են գիւղի տանուտէր Բաղիշ Մանուելով և գիւղական դատաւորներ Ալէքսան Աւագեանց և Գրիգոր Ուհանեանց: Ահա այդ հերքման բովանդակութիւնը: «Հասցնելով ձեզ, թէև ոչ իր ժամանակին, հետևեալ պաշտօնական հերքումը, խնդրում ենք տեղի չնորհել սրան ձեր լրագրի մօտակայ համարներից մինում: «Մեղուի» 1882 թվի № 120 մանր լուրերում, Մատրասայից հաղորդված էին մի քանի տեղեկութիւններ մեր Քարքանջ գիւղի ուսուցչի, դպրոցի և հասարակութեան վերաբերութեամբ: Որովհետև այդ տեղեկութիւնները բոլորը չինծու, սուտ, անազնիւ խղճի թելադրած և կոյր կրքերից առաջացած են, վասն զի մինչև այսօր այն բոլոր հաղորդածներից գոնէ մէկը ծնունդ չէ ստացած մեր հասարակութեան մէջ, ուստի խնդրում ենք «Մշակ» լրագրի յարգելի ընթերցողին չը կաղմել մեր խնամարհ, համբերող, համեստ և իր պաշտօնը խղճի մտօք կատարող ուսուցչի, մեր դպրոցի և մեր հասարակութեան վերաբերութեամբ այն տխուր գաղափարը, որ ակամայ յղանում է ընթերցողի մէջ «Մեղուի» չինծու, ստախօս յօդուածի ներգործութիւնից:»

—

Պ. Տէր-Յակովբեանի հրատարակած գրքից «Հայրենագիտութիւն» վերնագրով, երևում է որ Կովկասի և Անդրկովկասի բնակիչների ընդհանուր թիւը այժմ 5,637,000 է: Այդ թվից 1,000,000 հայեր են, որոնցից 960,000 բնակվում են Անդրկովկասում, իսկ 40,000 Հիւսիսային Կովկասում:

—

Ստացանք պ. Շահվերդեանից 2 ռուբլ, որ պարոնը ստացել է քաղաքային փոստով անյայտ մի անձից, անյայտ նպատակով: Այժմ պ. Շահվերդեան խնդրում է մեզ գործ ածել այդ 2 ռուբլ որ և է բարեգործական նպատակով և մենք մեր կողմից յատկացնում ենք այդ փողը Վանի Կենտրոնական վարժարանին:

—

Երէկ ուղարկեցինք ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ Անիի աւերակների պահպանութեան համար հանգուցեալ կաթողիկոսից կազմված հոգաբարձութեանը 190 ռուբլ գումարը, որ հաւաքված էր այդ նպատակով և հասցրած էր մեր խմբագրութեանը: Այդ փողը մենք ուղարկեցինք յիշեալ հոգաբարձութեան անդամներից մինի, քահանայ Մինաս Տէր-Պետրոսեանի հասցէով: Բայց դարձեալ կրկնում ենք, որ մենք Անիի աւերակների համար փողեր հաւաքելու ժամանակ չունենք, որովհետև այնպէս էլ շատ զբաղմունքներ ունենք:

—

Անդրկովկասի և Կովկասի ամեն ծայրերից, որտեղ միայն կան աղքատ հայոց դպրոցներ, ամեն կողմից դիմում են մեզ խնդրելով որ ձրիապէս ուղարկենք «Մշակը» այդ դպրոցներին: Դժբաղդաբար այդ մենք չենք կարող անել, ամենձրի ուղարկել մեր լրագիրը չենք կարող գանվեն մարդիկ, որոնք վճարեն այդ ձրի օրինակների համար և մենք ուրախութեամբ այլ դպրոցներին կուղարկենք մեր թերթը:

—

Մենք լսում ենք որ մի երկու ամսից բժիշկ Լևոն Տիգրանեանց Երևանից գալու է Թիֆլիս և այստեղ դիտաւորութիւն ունի կարդալ յերեն լեզուով մի դասախօսութիւն «Ժառանգութեան և ժառանգական հիւանդութիւնների մասին:»

—

«Кавказъ» լրագրում կարդում ենք որ Ղամբարեան շարունակելու է իր ռուսերէն դասախօսութիւնները քաղաքատնտեսութեան մասին հինգշաբթի, 17 փետրվարից սկսած, Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կ. Պոլսի քաղաքական և դիպլոմատական շրջաններում կարծում են, որ Բ. Դուռը չի պատասխանի եգիպտական հարցի վերաբերութեամբ դրած անգլիական յայտագրին: Թիւրքական պետական մարդիկ աշխատում են դրդել Թանին Անգլիայի հետ գործը բարեկամաբար լծայնել: Նրանք կարծում են, որ ռուսաց քաղաքին գործերի մինիստր Գիրս, վիեննական ժամանակ, համաձայնութիւն կայացրեց Ասլանի հետ Թիւրքիայի դէմ: Այդ պատճառով նրանք խորհուրդ են տալիս Թիւրքաց կառավարութեանը բանակցութիւններ չը շարունակել Ասլանի հետ երկաթուղիների վերաբերութեամբ: Պէտք է խոստովանել, որ Բ. Դրան նեղքինութիւնը անհասկանալի է: Շատ զօրքեր են ուղարկված Սկուտարի ալբանցիներին ընկճելու համար, Անկարգութիւնները էմինում շարունակվում են մի քանի ցեղեր հարկեր չեն վճարում:

—«Daily News» լրագրին Մարիցբուրգից գրում են, որ Մնիամանա և զուլուսների ազդեցութիւն ունեցող ուրիշ առաջնորդներ մենում են անգլիական կառավարութեանը տեսակ բողոքով դիմել. «Որպէս առաջնորդներ մար, որ յանուն եկեղեցու, յանուն կրօնի միտ ժողովրդին հարստահարելը—խաչագողութիւն է: Եւ ինքը պ. Սիմօնեանցը մի և նոյն ասում:

Այդ էլ մի տեսակ խաչագողութիւն է, ամենդար բարձրաձայն գոռալ, գոչել.—Ով հայերի բելի ազգ, պահպանեցէք մեր թերթը, որովհետև մենք ձեր կրօնի և եկեղեցու պաշտպանն ենք: Մենք պահպանում ենք ձեր հաւատը Ամիրխանեանցի որոգայթներից: Եթէ մենք ձեզանից բուբլի կառնենք, և մեր թերթի ճակատին կը նենք «ամենօրեայ» վերնագիրը,—իսկ ձեզ կը խաբենք և չարաթը երեք անգամ կը մեր թերթը, դուք, սիրելի հայեր, դրա վրա պիտի բարկանաք, որովհետև մենք ձեր եկեղ պաշտպանն ենք, եթէ մենք չը լինենք, Ամիրնեանցը կը քանդէ ձեր եկեղեցին: Եթէ մենք զանից ակցիաներով հաղարներ կառնենք, դրամագլխից և դիվիդենտ կը խոստանանք, յետոյ ձեր փողերը կը խրժենք,—դուք, սի հայեր, այդ մասին ձայն մի հանէք, որովհ մենք ձեր եկեղեցին պաշտպանում ենք Ամիրնեանցի դէմ: Երբ որ մենք սարքելու լինենք բելեանի կամեղիան, դուք մեզ փողեր և ընծա ուղարկեցէք, որովհետև մենք ձեր եկեղեցին պ պանում ենք Ամիրխանեանցի դէմ...

Եւ այսպէս մինչ Ամիրխանեանց, մինչ Ամ խանեանց, և ամեն դէպքում Ամիրխանեանցը ական հրապուրիչ առիթ է միամիտ ժողովրդ կրօնական զգացմունքը հարստահարելու համար

Պէտք է խիստ թշուառ համարել մի եկեղ դրութիւնը, երբ նրա քանդողը կը լինի Ամիրխ նեանցը, իսկ պաշտպանը «Մեղուն»: Այդ կեղ ղորները փարիսեցութիւնը հասցնում են մի այն աստիճանի, որ աշխատում են հաւատաց հայոց ժողովրդին, որ եկեղեցին, ամբողջ տա ութիւն դար ազգի հոգու, մտքի և սրտի հետ մի ցած եկեղեցին, խաղաթղթի պատառներից մ

կը բերեմ մի քանի տող «Խաչագողի Ցիշատակարանից.»

«Խաչագողը գիտէ մարդկային հասարակութիւնների թոյլ կողմերից օգուտ քաղել: Այդ թոյլ կողմերից աւելի դիւրախաբը, աւելի հեշտ հրապուրվողը կրօնական զգացմունքն է: Խաչագողը ամենայն ճարպկութեամբ հարստահարում է այդ սրբազան զգացմունքը»: (Տես «Մշակ» № 21:)

Կարծեմ ես և պ. Սիմօնեանցը երկուսս էլ համաձայն ենք մեր մտքերի մէջ:

Հիմա բերենք մի քանի օրինակներ.

Խաչագողութիւն չէ՞, երբ մէկը 55 թուականներում իրան ներկայացնում էր որպէս պարագլուխ այն խումբի, որոնք աշխատում էին բողոքականութիւն տարածել հայերի մէջ, և որոնց վրա Թիֆլիսի փողոցներում քարեր էին գցում,—իսկ երբ մի և նոյն պարոնի համար գցեցին մի հայոց դպրոցի դռանը մի կտոր հաց, նա թողեց բողոքականութիւնը, և սկսեց իրան ձևացնել Լուսաւորչական եկեղեցու ջերմ պաշտպան, որովհետև վերջինը աւելի շահաւէտ էր:

Բերենք ուրիշ օրինակներ ևս.

Խաչագողութիւն չէ՞, իր ամբողջ կեանքում այս և այն հայը սուրբի հետ մասլահաթներ անել, ամեն ստորութիւն յանձն առնել, և մինչև անգամ կաւատութեան պաշտօն կատարել, որ կարելի լինի նրանց քսակի ծուծը ծծել:

Խաչագողութիւն չէ՞, իրան ձևացնել բարոյականութեան դաստիարակ, և մի սուրբ հիմնարկութիւն Սոդոմ դարձնել:

Խաչագողութիւն չէ՞, ներելի համարել զգեստներ, խաչեր և արծաթեայ անօթներ հալելը, թանգարաններ կողոպտելը, և յանուն լուսաւորութեան, յանուն կրօնի, հարիւր հազարներ հաւաքելը և մի օտար երկիր ուղարկելը:

Այսպիսի շատ օրինակներ կարող էի բերել ես, բայց այդքանն էլ բաւական է ցոյց տալու հա-

ունեցել ծնվել հարուստ և ազնուական ծնողներից:

Եթէ որ և իցէ անձի արժանաւորութիւնները (պ. Սիմօնեանցի լոգիկայով) չափվում են նրա ծագումով և նրա տոհմային յատկութիւններով,—թող ներվի ինձ փոքր ինչ անցնել համեստութեան սահմանը, և ասել, որ ես իմ հայրենիքում այնպիսի բարձր դիրք ունէի, որ բաւական բարձր դրութիւն ունեցող մարդիկ իմ դռանը նոքարութիւն էին անում: Ես մի ամբողջ դաւառի հայ ազգաբնակութեան պետը և ներկայացուցիչն էի. իմ ձեռքի տակով էին անցնում ազգային բոլոր նշանաւոր գործերը: Իսկ իմ հայրը, Մելիք-Միրզա-բէկը, Թիֆլիսի պարսկահպատակ վաճառականների թաջիր-բաշի էր, միշտ յարգված արքունի խալաթներով և շքանշաններով: Մեր ազնուականութեան տոհմային հրովարտակները, իրանց բոլոր արտօնութիւններով, նորոգվեցան պարսից ներկայ Շահի նոր չնորհված բարձրագոյն ֆիրմանով:

Ես այս բոլորին մի առանձին նշանակութիւն չեմ տալիս. ես ինձ այժմ բախտաւոր եմ համարում, որ տխուր հանգամանքները ինձ ցած գլորեցին իմ բարձրութիւնից և ձգեցին մի այնպիսի ասպարէզի վրա, ուր կարող եմ գործել, աշխատել իմ ազգի աղքատ գրականութիւնը հարստացնելու համար:

Կրկին դառնանք դէպի խաչագողները: Ես այս կէտի վրա պէտք է փոքր ինչ աւել կանգնեմ, որպէս զի ցոյց տամ, թէ իսկապէս ով է խաչագողը:

Ինքը պ. Սիմօնեանցը այսպէս է բացատրում խաչագողի նշանակութիւնը. «խաչագողութիւն է միամիտ ժողովրդները յանուն սուտ քրիստոնէութեան, յանուն բարեպաշտութեան հարստահարելը, գողութեամբ, խաբեբայութեամբ, խարդախութեամբ, և այլ սրանց նման սիրադործութիւններով»: (Պ. Սիմօնեանցը իմ գրած բանը ինձ է ուզում սովորացնել:) Ցիշեալ մտքերի համեմատ ես

մար, որ յանուն եկեղեցու, յանուն կրօնի միտ ժողովրդին հարստահարելը—խաչագողութիւն է: Եւ ինքը պ. Սիմօնեանցը մի և նոյն ասում:

Այդ էլ մի տեսակ խաչագողութիւն է, ամենդար բարձրաձայն գոռալ, գոչել.—Ով հայերի բելի ազգ, պահպանեցէք մեր թերթը, որովհետև մենք ձեր կրօնի և եկեղեցու պաշտպանն ենք: Մենք պահպանում ենք ձեր հաւատը Ամիրխանեանցի որոգայթներից: Եթէ մենք ձեզանից բուբլի կառնենք, և մեր թերթի ճակատին կը նենք «ամենօրեայ» վերնագիրը,—իսկ ձեզ կը խաբենք և չարաթը երեք անգամ կը մեր թերթը, դուք, սիրելի հայեր, դրա վրա պիտի բարկանաք, որովհետև մենք ձեր եկեղ պաշտպանն ենք, եթէ մենք չը լինենք, Ամիրխանեանցը կը քանդէ ձեր եկեղեցին: Եթէ մենք զանից ակցիաներով հաղարներ կառնենք, դրամագլխից և դիվիդենտ կը խոստանանք, յետոյ ձեր փողերը կը խրժենք,—դուք, սի հայեր, այդ մասին ձայն մի հանէք, որովհետև մենք ձեր եկեղեցին պաշտպանում ենք Ամիրխանեանցի դէմ: Երբ որ մենք սարքելու լինենք բելեանի կամեղիան, դուք մեզ փողեր և ընծա ուղարկեցէք, որովհետև մենք ձեր եկեղեցին պ պանում ենք Ամիրխանեանցի դէմ...

Եւ այսպէս մինչ Ամիրխանեանց, մինչ Ամ խանեանց, և ամեն դէպքում Ամիրխանեանցը ական հրապուրիչ առիթ է միամիտ ժողով կրօնական զգացմունքը հարստահարելու համար

Պէտք է խիստ թշուառ համարել մի եկեղ դրութիւնը, երբ նրա քանդողը կը լինի Ամիրխ նեանցը, իսկ պաշտպանը «Մեղուն»: Այդ կեղ ղորները փարիսեցութիւնը հասցնում են մի այն աստիճանի, որ աշխատում են հաւատաց հայոց ժողովրդին, որ եկեղեցին, ամբողջ տա ութիւն դար ազգի հոգու, մտքի և սրտի հետ մի ցած եկեղեցին, խաղաթղթի պատառներից մ

...ական ժողովրդի, մենք բողոքում ենք թագու-
...առաջ զուլուսների երկիրը բաժան-բաժան
...ելու դեմ։ Միայն երկրի փոքրիկ շերտը, ամբողջ
...ի երրորդ մասից պակաս, մնում է Սուլթա-
...ի իշխանության տակ, այն ինչ ամբողջ ժողո-
...վրդը ցանկություն յայտնեց նրա իշխանության
...տակ մնալ։ Մնիամանա երբեմն առաջին մի-
...նիստր էր։

—«Frankfurt· Zeit·» լրագրին հաղորդում են,
...այս օրերս Բուչչուկում կալանաւորեցին ծայ-
...յեղ ազատամիտ կուսակցության ներկայացու-
...չներից մեկին, Դմիտրեվիչին, շրջաբերականներ
...տարածելու պատճառով, որի մեջ նա յայտ-
...նում է, թէ «Բոլգարիայի իշխան Բատենբերգ
...ցանք է աքսորվի Բոլգարիայից։»

—Գլադստոն դեռ ևս գիտաւորություն չունի
...Անգլիա վերադառնալ, թեպետ նրա առողջությու-
...ն բաւական կազդուրվեցաւ. նա կամենում է
...մինչև մնալ, որովհետև այնտեղի կլիման շատ
...աւելի է ներգործում նրա վրա։ Նրա բարեկամները
...ս խնդրում են նրան մնալ։ Այնուամենայնիվ, նա
...այնտեղ երկար չի մնակվի, և նրա վերադառնա-
...ու ժամանակը կախված է նրանից, թէ ինչպէս
...երթան գործերը Ռեստմինստերում։ Նա այժմ
...արտնակում է հանգիստ կեանք վարել, համա-
...ռեա միշտ բաց օդում, չը նայելով, որ վերջին
...համանակներում եղանակը այնտեղ բաւական
...սառ է։

—«Կէօլնի Լրագրին» Կ. Պոլսից գրում են փե-
...տրվարի 2-ից հետևեալը. «Պարսկական դեսպան
...Օսմանն-խանի ցանկությամբ, Բ. Դուռը համա-
...յնվեց աքսորել չէյխ Իբադուլլահին և նրա որ-
...դուն Մոսուլից և բնակեցնել Մեքքա։

—«Daily Telegraph» լրագրին Կ. Պոլսից հա-
...ղորդում են, որ Բերլինի թիւրքաց դեսպան Սա-
...դուլլա-փաշան յետ կը կանչվի, որովհետև գերմա-
...կան դեսպանը գանգատվել է նրա դէմ Բ. Դրանը։
...Ինչպէս երևում է Սադուլլան կիսապաշտօնապէս
...հաղորդից իր կառավարությանը, որ Գերմանիան
...յայտ կերպով է պաշտպանում Թիւրքիային մի-քա-
...նի հարցերում։ Իշխան Բիսմարկին դուր չեկաւ
...այդ վարմունքը, և Բաղդիլին հրամայեց գան-
...գատվել Բ. Դրանը։ Այդ պատճառով, ինչպէս ա-
...սում են, վճռված է Սադուլլա-փաշայի տեղ Բեր-
...լին ուղարկել Էդհէմ-փաշային։

—«Popolo Romano» լրագիրը, որ Դեպրետիսի
...երգան է, խօսում է լրագիրների հաղորդած այն
...տեղեկության մասին, որ իբր թէ Գլադստոն դի-
...տաւորություն ունի ոչնչացնել այն հարկը, որ
...իւրաքանչիւր տարի Եգիպտոսը վճարում է Բ.
Դրանը։ Լրագիրը նկատում է, որ Անգլիան իսկա-
պէս իրան Թիւրքիայի տեղ է դնում, որպէս Ե-
գիպտոսի բարձրագոյն հրամանատար, և ապա
յայտնում է, որ անգլիական տիրապետությունից
շահվում են քաղաքակրթությունը և պրոգրէսը։

—Սիամի լրագիրների խօսքերով, մի քանի օր
առաջ Սիամի թագաւոր Թրամ-Լուանդ հրամայեց
անգլիական դեսպանին իր մօտ բերել բողոքական
միսիոնարներին, որոնք ապրում են նրա մայրա-
քաղաքում, և չափից դուրս սիրով ընդունեց նը-
րանց։ Թագաւորը անգլիերէն լեզուով մի ճառ
խօսեց, որի մեջ յիշեց, որ մարդկությունը քրիս-
տոնէությանն է պարտական իր շատ առաջադի-
մություններով և մարդասէր հիմնարկություններով։
Ի հարկէ, նա և իր սերունդը միշտ հաւատարիմ
կը մնան բուդդայական կրօնին, այնու ամենայ-
նիվ նա կը հովանաւորէ միսիոնարներին աւետա-
րանը քարոզելու ժամանակ։

—«Neue Freie Presse» լրագրին Կատտարոից
հեռագրում են, որ ցերնոգորիական իշխանը նշա-
նակեց միարօպոլիտ Վլասարիոնին դատաւորներ
և ժողովրդական լուսաւորության մի-
նիստր։

—«Morning Post» լրագրին Կ. Պոլսից հեռա-
գրում են, որ այն լուրը, թէ Գլադստոն դիտաւո-
րություն ունի ոչնչացնել այն հարկը, որ ստանում
է Թիւրքիան Եգիպտոսից, մեծ տպաւորություն
գործեց Ոսկեղջիւրի վրա։ Բայց դա ծիծաղելի և
օտարոտի է, ասում է «Frankf· Zeit·» լրագիրը,
որովհետև Բ. Դուռը այժմ ևս հարկեր չէ ստա-
նում Եգիպտոսից։ Այդ փողերը գնում են անգ-
լիական բանկը և նշանակվում են Թիւրքիայի
պարտատէրերին բաւականացնելու համար։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մի ամերիկական թատրոնում, ներկայացման ժամանակ, գլխաւոր դերասանուհին յանկարծ իմանում է որ թատրոնի մեջ կրակ է յայտնվել։ Թատրոնի կառավարիչը յուսահատված էր, չը գիտենալով ինչպէս յայտնի այդ լուրը հասարակությանը, որպէս զի հասարակությունը չը սարսափի և թատրոնից փախչելով մարդիկ միմեանց չը կոտորեն, ինչպէս միշտ լինում է այդ տեսակ դիպուածներում։ Դերասանուհին յանձն առաւ յայտնել այդ լուրը հասարակությանը։ Երբ բոլոր դերասանները հեռացվեցան ետևի դռնից, դերասանուհին շտապով մօտեցաւ բեմի ափին և զգացված ձայնով դիմեց հասարակությանը հետևեալ խօսքերով։ «Պարոններ և տիկիններ. այս րոպէիս մեր թատրոնի կառավարիչը խանդոտությունից դրդված սպանեց դերասանուհիներից մինին և անմիջապէս ինքն էլ անձնասպանություն գործեց։ Դիակները արդէն դուրս տարվեցան։ Դուք հասկանում էք որ այդ տեսակ տխուր հանգամանքներում մենք չենք կարող ներկայացումը շարունակել։» Հասարակությունը տխուր տրամադրության մեջ սկսեց դուրս գալ թատրոնից, սովորական կարգը պահպանելով և երբ որ միայն երկու երեք մարդ էին մնացել թատրոնում, նրանք սարսափով նկատեցին թէ թատրոնի առաստաղը և բեմի վարագույրը սկսում են այրվել։ Այսպիսով հասարակությունը պարտական եղաւ ճարպիկ դերասանուհուն որ ազատվեցաւ հաստատ կորուստից, թատրոնի մեջ այրվելուց։ Միւս օրը քաղաքի երախտագէտ հասարակությունը 5000 դոլլարի արժողությամբ պարգև ընծայեց իր փրկչուհուն։

* *

«Երևանի Յայտարարություններ» թերթի մեջ կարդում ենք հետևեալ լուրերը Երևանից։ «Լսում ենք որ անյայտ աւազակներ փետրվար ամսի 1-ի գիշերը գողացել են հանդուցեալ Խաչատուր քահանայի տանից 199 ռուբլու իրեղէններ։ Նոյն գիշերը անյայտ մարդիկ գողացել են Դարձակ Դաւթի Խնայոլի տանից մի բևռ ցորեն և մի քանի իրեղէններ։ Գումարը յայտնի չէ։ Ամսիս 2-ին գիշերը տեղիս բերդի բանտարկեալներից տասն և մէկ հոգի ծակում են բանտի պատը և դուրս փախչում։ Պահապանները զոյանից հինգին սպանում են և երկուսին վիրաւորում, իսկ չորսին յաջողում է փախչել։ Վերջիններին կալանաւորելու համար կարգադրություն է արած։»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

ՕԴԷՍՍԱ, 20 փետրվարի։ Բէյդի սառուցը ճայթեցնելու համար նշանակված է 10,000 ռ.։ Կարծում են, որ հաղորդակցությունը կը վերականգնվի շաբաթ կամ կիրակի։

ՄԱՐԻՈՒՊՈԼ, 10 փետրվարի։ Մարիուպոլի գծի վրա հաղորդակցությունը վերականգնված է։

ՓԱՐԻԶ, 10 փետրվարի։ Պաշտօնական լրագրի մեջ հրատարակված է մինիստրության ցուցակը։ Վերջին րոպէին նշանակված են մինիստրներ՝ առևտրական Գերիսքոն, երկրագործության Միլլոն և ուրթ մինիստրպատգամաւորներ, որոնցից չորսը պատկանում են հանրապետական և չորսը դեմոկրատական միութեանը։ Նոր մինիստրության առաջին կարգադրություններից մէկը այն կը լինի, որ նա կը հրաժարեցնէ իշխաններին իրանց պաշտօններից։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 փետրվարի։ Գվարդիայի և Ս. Պետերբուրգի զինուորական շրջանի զօրքերի հրամանատարը պատուիրում է զօրաբաժինների կառավարիչներին աւելի խստությամբ հսկել օֆիցերների պատրաստության վրա հրացանաձգության համար։ Օտար լրագիրները հաղորդում են, որ կառավարությունը պատուիրեց օտար գործարանատէրերին ականակիր չորս նաւեր Սև ծովի համար։ Այդ նաւերը կը հասնեն Նիկոլաեվ նաւաշինության սկզբին։ „Голосъ“ լրագրին հեռագրում են Կիևից, որ պայմանաւոր ուռնավաճառի ժողովը սկսվեցաւ։ Շաքարի գործարանների մեծամասնությունը 25% ընդարձակում է ճարպալի արդիւնաբերությունը և գնելը։ Շաքարի ապագայ առևտուրը հանգարտ է, ներկան ամուր։

ՀՌՈՄ, 10 փետրվարի։ Իտալական հիւպատոսին Տրիպոլիսի մէջ վիրաւորելու գործի մասին Իտալիային բաւականություն է տուած։ Բ. Դուռը պատուիրեց Տրիպոլիսի նահանգապետին ներողություն խնդրել հիւպատոսից, իսկ մեղաւորները դատապարտված են կալանաւորմանը բանտի մէջ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

...ած մի տնակ է, որ կազմում են երեխաները, և
...թէ Ամիրխանեանցը փչելու լինի, իսկոյն կը
...անվի։

Այդ բոլորը ինձ յիշեցնում է մի աղուէսի առակ։
Արագիլը բոյն էր դրել հաստաբուն, բարձրա-
...կատակ կաղնի ծառի վրա, որի կատարը հասել
...էր մինչև ամպերը։ Նա իր հոյակապ բոյնի մեջ
...աղաղությամբ ապրում էր և կերակրում էր իր
...ձագերին։ Ցանկարծ խորամանկ աղուէսը մտածեց
...գրաւել քաղել արագիլի միամտությունից։ Նա ա-
...մեն օր գալիս էր, թրջիկացնում էր ծառի բու-
...ները և ձայն էր տալիս. «Ցած գցիր ճաներիցդ մէ-
...կը, որ ես ուտեմ, դու չես իմանում, որ ես եմ
...ճանապարհում քո բոյնը. ամեն օր փայտ կտրողը
...գալիս է և ուղում է այդ ծառը կտրել, բայց ես
...դրգելում եմ, չեմ թողնում։ Եթէ նա ծառը կտ-
...ելու լինի, քո բոյնը կը քանդվի և քո ճաները
...չ կենդանի չեն մնայ»։ Միամիտ արագիլը հաւա-
...տում էր նրա խօսքերին, և ամեն օր տալիս էր
...իր ճաներից մի-մի հատ, որ նա ուտի, որպէս զի
...իր բոյնը հաստատ մնայ, և գոնէ մնացած ճաները
...գազանին վտանգից։ Միանգամ օդի միջից անց-
...նում էր թռչունների արքան—արծիւը։ Երբ նա
...տեսաւ աղուէսի մի և նոյն խօսքերը, ասաց նրան.
«Օ, ողորմելի թշուառական, դու ինչ ես, որ կա-
...ղանաս պահպանել այդ հաստատուն կաղնին
...այդ կտրողից. դու քո փորի համար ես միայն
...տածում»...։ Այդ խօսքերի հետ արծիւը իր զօ-
...ւոր ճանկերով յափշտակեց մերձակայ բլուրից
...մի ժայռի կտոր, և վերևից նետեց խաբեբայի գլը-
...խին։ Նա հոգին տուաց, ասելով. «Իմ մեղքերի
...համար, պատժեց ինձ Աստուած»...

Այդքանը բաւական է խաչագողի և խաչագո-
...ղության մասին։ Պ. Սիմոնեանցի գրուածքի մեջ
...նում է երկու կէտ, որ չեմ կարող առանց պա-
...տասխանի թողնել։

Պ. Սիմոնեանցը մութ կերպով խօսում է ինչ-որ
...նգքի վրա, իբր թէ մէկին թարս նստացրել են
...էշի վրա, երեսին մուր են քսել, փողոցներում
...պտտացրել են և յետոյ արտաքսել են մի քա-
...ղաքից։ Հետաքրքիր կարիկատուրա է. մի այսպի-
...սի պատկեր կարող էր ստեղծել միայն պ. Սիմո-
...նեանցի հիւանդոտ ֆանտազիան։

Եթէ պ. Սիմոնեանցը այդ էշավարի պատմու-
...թիւնով կամենում է ակնարկել իմ Պարսկաստա-
...նից տարագրվելու մասին, ես կը պատմեմ եղելու-
...թիւնը որպէս կատարվել է, ի հարկէ, շատ հա-
...մառօտ կերպով։

Թաւրիզում մի քանի խարդախ հայեր ինձ
...մատնեցին կառավարությանը։ Իմ Պարսկաստա-
...նի մասին տպված գրուածքներից շատերը (նրանց հետ աւելացնելով և այնպիսի գրուածքներ, որ բոլորովին իմ հեղինակությունը չէին) թարգմանելով ներկայացրին պարսից թէ հոգևոր և թէ մարմնաւոր իշխանությանը։ Աշխատեցին ինձ մեղադրել կառավարության առջև որպէս քաղաքական յանցաւոր, իսկ հոգևոր իշխանության առջև՝ որպէս մահմեդական կրօնի հայհոյիչ։ Թաւրիզի մուշտեհիդը (մոլլաների գլխաւորը) մահապարտության վճիռ տուաց իմ վերաբերությամբ։ Այդ վճռից յետոյ ամեն մի մահմեդական փողոցում պատահած ժամանակ իրաւունք ունէր ինձ սպանել և անպատիժ մնալ։ Իմ տունը քարկոծում էին. գիշերները հրացաններ էին արձակում իմ տան վրա։ Իմ կեանքը վտանգի մեջ էր։ Մոլլահանդ մահմեդականները կատաղած էին իմ դէմ։

Ատրպատականի փոխարքայ և Թաւրիզի գլխաւոր կառավարիչ Սահար-դիւանը, քննելով մատնությունը, գտաւ, որ դա մի քանի խարդախ հայերի ինտրիգա էր իմ դէմ և աւելի ոչինչ։ Բայց իմ կեանքը գրգռված ամբոխի կատաղությունից զերծ պահելու համար, Սահար-դիւանը մի չարաթվայ չափ ինձ պահեց իր տանը, յետոյ խորհուրդ տուաց առ ժամանակ հեռանալ Պարսկաստանից, մինչև յուզմունքը դադարի։ Ինձ տուաց կառավարության սուրհանդակներ, ես ստացայ անցագրեր ռուսաց հիւպատոսարանից և պարսից դիւանախանայից, գիշերով թողեցի Թաւրիզը, և երկրորդ օրվայ առաւօտը արդէն գտնվում էի ռուսաց հողի վրա։

Այդ անցքի մէջ միջամտություն է գործել Պարսկաստանի առաջնորդ Անդրէաս եպիսկոպոսը, այդ անցքի մէջ միջամտություն են գործել մի քանի հիւպատոսներ. այդ անցքի մասին հեռագիրներ են գնացել Թէհրան և այնտեղից պատասխաններ են ստացվել,—վերջապէս այդ անցքը յայտնի է Պարսկաստանի բոլոր հայերին, դա ծածուկ բան չէ։ Ամենքը գիտեն, որ ես մատնության զոհ եմ եղել, հալածվել եմ, բայց իմ պատուի դէմ ոչ մի անարգանք չի կատարվել։

Եւ ինչ զարմանալի բան է, որ Պարսկաստանի պէս մի երկրից, ուր կանայականությունը տիրում է օրէնքի տեղ, տարագրել են ինձ։ Ես մի փոքրիկ ազգի փոքրիկ դրօշն եմ։ Բայց այս տեսակ հալածանքներ պատահել են ամենամեծ ազգերի մէջ ամենամեծ գրողների վերաբերությամբ։ Ֆրանսիան մի ժամանակ աքսորեց իր միջից Վիկտոր Հիւգոյին, իսկ այժմ պաշտում է նրան։ Բանտը, աքսորը, հալածանքը վիճակված է եղել մի քանի ականջանշանաւոր բանաստեղծներին,—և դրա մէջն է նրանց փառքը։

Պ. Սիմոնեանցը խօսում է մի Ց... Մ...ի մասին ևս, իբր թէ այդ անձը 72 թուականից յետոյ (լաւ յիշեցէք, 11 տարի առաջ) Թաւրիզից նամակով դիմել է նրան, առաջարկել է նրա թերթին թղթակցել և աշխատակցել, և այդ նամակը պահվում է «Մեղուի» խմբագրատանը և այլն։ Յետոյ նա խորհուրդ է տալիս ինձ, որ ֆալշիներից հարցնեմ, թէ ով է այդ Ց... Մ...ը։

Առանց ֆալշիներից հարցնելու, ես գիտեմ, որ յիշեալ անձը ես եմ եղել։ Իրաւ է, ես իմ կեանքում մի անգամ դժբախտություն եմ ունեցել պ. Սիմոնեանցին մի նամակ գրելու։ Բայց թէ ինչ առիթով,—ահա այստեղ է հետաքրքիր կէտը, որը պ. Սիմոնեանցը իր սովորական ձևով յեղաշրջելով, կամենում է ցոյց տալ, իբր թէ ես դիմել եմ նրան, խնդրելով, որ ինձ ընդունէ իր թերթի աշխատակից։

Ահա իրողությունը։ Թաւրիզում գտնված ժամանակ ես տեղային ազգային ընթերցարանի գրադարանապետ էի։ Որպէս պաշտօնական մարդ, ընթերցարանի կողմից պաշտօնական ձևով ես դիմեցի պ. Սիմոնեանցին, յայտնելով, թէ ընթերցարանը հայոց բոլոր պարբերական հրատարակությունները ստանում է ձրի, և խնդրեցի, որ ինքն ևս բարեհաճէ մի օրինակ «Մեղու» ձրիաբար ուղարկել ընթերցարանին։ Մի և նոյն նամակում յայտնեցի, եթէ չի կամենայ ձրի ուղարկել, ես նրա թերթի տարեկան վճարի փոխարէն կուղարկեմ մի թղթակցություն (և ոչ երկուսը)։

Հիմա դատեցէք, միթէ դա նշանակում է, թէ ես առաջարկել եմ աշխատակցել «Մեղուին»։ Եւ դիցուք թէ, ճշմարիտ լինէր այդ. միթէ պ. Սիմոնեանցը իր թերթը այն աստիճան խայտառակ բան է համարում, որ նրան աշխատակցելու առաջարկությունը կարող էր ինձ համար անպատուություն համարվել, որ իմ երեսին է տալիս իբրև մի յանցանք։

Վերջացնում եմ իմ պատասխանը մի երկու տող ևս աւելացնելով։ Երևում է, որ պ. Սիմոնեանցը յօրելեանի կօմեդիայից յետոյ և արծաթէ պսակ ստանալուց յետոյ բաւական հպարտացել է։ Բայց այս տեսակ վատ միջոցներով և զանազան արհեստական հնարներով ձեռք բերած արծաթէ պսակը աւելի շուտ է հնանում, աւելի շուտ է ոչնչանում, քան թէ իմ մաշված հագուստները...

Բաֆֆի

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԹԵՐԹ“
ՄԻ ԱՄՍՎԱՑ ՀԱՆԴԷՍ
(1—2 տպագրական թերթից բաղկացած)
1883 թ.

Հրատարակվում է ԵՐԵՒԱՆՈՒՄ։ Տարեկան գինն է 3 ռուբլ կանխիկ վճարելի։ Ստորագրվել կարելի է խմբագրատանը։ Օտար քաղաքից դիմում են հետևեալ հասցէով. Въ г. Эривань. Въ редакцію журнала „Гигіеническаго листка“

Խմբագիր հրատարակիչ, երևանի քաղաքային բժիշկ ԼԵՒՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆՑ

1—5

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
Յ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ
„ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ“
երրորդ տարուայ դասագիրքը
երկրորդ տպագրութեամբ։
Գինը 40 կոպէկ է։
Գումարով առնողներին զիջումն կը լինի։ Ծախվում է կենտրոնական գրավաճառանոցում։

ԾԱԽՎՈՒՄ Է
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ
ԾԱՂԿՈՒՆՔ
(թարգմանականք. Ա. Մ. Ե. Պ.)
Ազնիւ թղթի վրա գեղեցկատիպ։
ԳԻՆԸ 25 կ.։

„ՎԱՐԺԱՐԱՆ“ մանկավարժական ամսագրի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ, ցաւօք սրտի յայտնելով իր տաղանդաւոր աշխատակից՝ մանկավարժ ԱՌԱՔԵԼ ԲԱՀԱԹՐԵԱՆԻ անակնկալ մահը, որ տեղի է ունեցել Խարկով քաղաքում, ամսիս 5-ին, խոնարհաբար խնդրում է նորա բարեկամներին և ծանօթներին յարգել հանգուցեալի յիշատակը, ներկայ գտնվելով նորա ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻՆ, որ կատարվելու է առաջիկայ ԿԻՐԱԿԻ, փետրվարի 13-ին, առաւօտեան 11 ժամին ՄՈՂՆՈՒ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ։

2—2

ԵՐԿԱԹԷ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ



Մի հոգու համար 8 ռուբլուց, երկու հոգու համար 14 ռ., մահճակներ ծովային խոտով լցված 6—9 ռ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։** Նոյն տեղը մեծ քանակութեամբ ԱՄԱՆՆԵՐ, դանակներ պատառաքաղներով, երկաթէ ԳՐԻՉՆԵՐ, կողպէքներ, թիեր, տղամարդկերանց և կանանց ԹԱՄԲԵՐ, մատուցարաններ, ԿԼԷՕՆԿԱ, ըէվոլվերներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ալբոմներ, կոնֆեկտներ, թէյ 1-ին հունձի և այլն 25% աւելի լաւ և էժան քան թէ ուրիշ տեղ։

31—100

ՌԱՖՖԻ
ԽԱՄՍԱՅԻ
ՄԷԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.

Գիրքը բաղկացած է 467 երեսներից

Թիֆլիսում վաճառվում է՝

„Մշակի“ խմբագրատանը.—„կենտրոնական գրավաճառանոցում“ Միրիմանովի տանը №№ 3 և 4. Պ. Զաքարիայ Գրիգորեանցի „Կովկասեան գրավաճառանոցում“.—Պ. Լենֆիաճեանցի ծխախոտի խանութում.—Պ. Շահլինեանցի ծխախոտի խանութում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել կամ յիշեալ տեղերը, կամ ուղղակի հեղինակին հետևեալ հասցէով։
ТИФЛИСЪ. Редакція „Мшакъ“.
РАФФИ.

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԿԱԹԷ ԹԵԼԻՑ խոզանակներ (ՇՂԷՕՏԿԱՆՆԵՐ) արծաթաջրած և վկայականով, ԳԼՕԲՈՒՍԻ ԳՐԻՉՆԵՐ, որոնցով կարելի է գրել ամենակոշտ թղթի վրա, գեղեցիկ ԹԷՅԱՄԱՆՆԵՐ մի ֆունտ լաւ թէյի հետ 1 ռ. 65 կ.։ Ծախվում են Անգլիական խանութի մէջ։ Նոյն տեղը 500 տեսակ գրիչներ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՁԵՌԱԳՐԻ համար և շատ ուրիշ ապրանքներ ծախվում են ԿԻՍԱԳՆՈՎ։

6—10

PHOSPHATE DE FER
De LERAS, Docteur ès-sciences.
Գիտութեանց տոքթոր և դեղագործ
Լրատի
ՖՕՍՖԱԹ ՏԸ ՖԷՌԸ

Այս դեղը արիւնը և ոսկրները վերանորոգելու և զօրացնելու համար գործածուած դեղօրէից ամենաազդուն է։ Ոչ պնդութիւն կը պատճառէ, ոչ ստամոքսը կը հոլնեցնէ և ոչ ալ ակռաները կը սևացնէ, միշտ մեծ յաջողութեամբ բժշկում է կանանց ապիտակ հոսումը, ստամոքսի ցաւը, ժաղտնութիւնը, արեան տկարութիւնը, միով բանիւ այն ամէն հիւանդութիւնները, որոց ենթակայ են փափուկ կանայք և դեռատիպիթ աղջկունք և մանկունք, Լրը ժաղտն, անարիւն, թուլամարթ և անախորժ են։

Ծախվում է Փարիզ, Վիվիէն փողոց № 8 և գլխաւոր դեղավաճառաց մօտ. Т

Թիֆլիսում դեղատան ապրանքների վաճառման Բարձրագոյն հաստատված Կովկասեան ընկեր. մէջ և Շահ-Պարոնեանցի մօտ։

(5. 12) 2—6

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
БРОШЮРА
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

ԳԱԼԵՐԵԱ ԱՐԾՐՈՒՆԻ, ԴՎՕՐՅՕՎԱՑԱ ՓՈՂՈՑ
ՊԱՀԵՍՏ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ № 144.
СКЛАДЪ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ
№ 144, ГАЛЛЕРЕЯ АРЦРУНИ

Ծախվում են. մեծ քանակութեամբ և խիստ էժան, Վիէննայի ԹՈՆԷԹ ֆաբրիկայի ՄԷԲԷԼԻ ամէն տեսակ, նոյնպէս ՈՍԿԵԶՕԾ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ հայելիների համար և ՀԱՅԵԼԻՆԵՐ, լուսանկարների համար ԱԼԲՈՒՄԻ թուղթ, ԲԷԼՂԻՅԻ ԱՊԱԿԻՆԵՐ պատուհանների համար, ամէն տեսակի, նոյնպէս ՄԱՐՄԱՐԻՈՆ քար, ԹՈՒՋԵԱՑ ԱՄԱՆՆԵՐ էմայլով, ՆԻԹՐԱԹ ԴԱՐԺԱՆ, ՈՍԿԻ և ուրիշ շատ ապրանքներ։

Մի ԳԵՐՄԱՆՈՒՀԻ տիկին, ՎԻԷՆՆԱՑԻՑ եկած, միջին հասակի, կը կամենար ՈՒՍՈՒՑՉՈՒՀՈՒ կամ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՀՈՒ պաշտօն ունենալ Թիֆլիսի մի լաւ ընտանիքում։ Կարող է և ԳԱՒԱՌՆԵՐԸ գնալ։

Հասցէն „ՄՇԱԿԻ“ խմբագրատանը։

6—10

ԴՐ. Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑԻ
ԵՐՐՈՐԴ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ կը լինի առաջիկայ ՇԱԲԱԹ ՕՐ, 12-ին փետրվարի, ԱՐՈՒՆՈՒ թատրոնի դահլիճում։
ՍԿԻԶԲԸ երեկոյեան ժամի 8-ին։
ՏՈՄՍԱԿՆԵՐԸ ստացվում են թատրոնի կասայում։

3—3

ՎԻԷՆՆԱՑՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է
L'ORIENTAL
ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ։

„Ժուրնալ դ'Օրիան“ դադարեցրած թերթի տեղ է հրատարակվում այդ նոր լրագիրը։ „L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 ռուբլ է, կէս տարվանը 4 ռուբլ։

Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիէննայում դիմելով հետևեալ հասարակ հասցէով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ
ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՁԵՌՆԱՐԿ ՀԱՅ ՏՂԱՅՈՑ ԵՒ ՕՐԻՈՐԴԱՑ ՀԱՄԱՐ

Ձեռնարկիս մէջ պարունակվում է 1. ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ, 2. ԿՈՎԿԱՍԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, 4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, ուր գլխաւորապէս խօսվում է հայոց վրա։

ՊԱՏԿԵՐՆԵՐԸ պատրաստել են Մատիւշին և Կրիւկով Ս. Պետերբուրգի երեւելի նկարիչները։

ԳԻՆՆ Է 60 ԿՈՊԷԿ։

Աւետիք Տէր-Յակովբեանց

4—5

INJECTION AU MATICO
De GRIMAULT & Cᵉ, PHARMACIENS A PARIS
PERMIS EN RUSSIE
Փարիզի Գրիմօ և ընկերք
դեղավաճառաց
ՄԱԹԻՔՕԻ ԷՆԺԷԿՑԻՕՆԸ
Ռուսաստանում ընդունված.

Այս դեղը որ Փէրուի Մաթիքօ կոչուած զուտ բոյսէն բաղադրեալ է, քիչ աւուր մէջ ամենից շատ հնացած հոսումները կը բժշկէ, և այդ պատճառաւ մի քանի տարուան մէջ ամբողջ աշխարհում հռչակուած է.

Ծախվում է Փարիզ, Վիվիէն փողոց, № 8 և գլխաւոր դեղավաճառաց մօտ. Т

Թիֆլիսում դեղատան ապրանքների Կովկ. ընկ. մէջ և Շահ-Պարոնեանցի մօտ։

(5. 12. 23) 2—9

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ, ԹԷՅԻ ԳՆԵՐԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՓՈՓՐԱՑՈՒՄՆ
(MAISON DE CONFIANCE) ԱՐԾՐՈՒՆԻ ԳԱԼԵՐԷԱ № № 156, 157, 158, 159 և 160.

Համեմատեցէք թէյ

1 ռ. 10 կ. թէյի հետ	ամէն տեղ	1 ռ. 30
1 „ 20 „	. . . . .	1 „ 60
1 „ 40 „	. . . . .	1 „ 90
1 „ 60 „	. . . . .	2 „ 20
1 „ 80 „	. . . . .	2 „ 50
ամենալաւը 2 ռ.	. . . . .	3 „ —

Մի և նոյն տեղը գործակալութիւն վաճառման շօկոլադի և կակաո-ֆրայ էսսենցիայի, պալմերի բիսկվիտների, բազրի կոնֆիտների, շեֆիլդի դանակների, Տուրնիրի գրիչների, Դաուի հրացանների, Վեկլի ըէվոլվերների, Բարնսբիի թամբերի, Մեկֆարլանի սամաններ, կոլմանի կրախմալ և մանանեխ, Շեֆարցի ալբոմներ և այլն և այլն։

64—100

Дозволено цензурою, Тифлисъ, 11 Февраля 1883 года. Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул. каз. д.